

Ա Յ Ո Ռ  
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ  
**ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԱԲՆՆՑ**  
ԵՐՈՒՍԱՂԷՄ

Գերազնորն Տ. Մեսրոպ Ս. Արքեպս. Եւանեան,  
Լուսարարապետ Սուրբ Արոռոյս,  
ԱՍՏ

Կարգացի, ըս կարելոյն, երեմիա Չելեպի Քեօմիւրհեանի *Օրագրութեան* նորատիպ պրակները, եւ, յատկապէս, անոր իբրեւ *Ներածութիւն* գրած Չեր ուսումնասիրութիւնը:

Ուրախ եմ որ մեր *Դուրեան Մասեկադարանի* շարք կը հարստանայ կարելոր հրատարակութեամբ մը, որ կոչուած է զգալի չափով լոյս սփռելու իր ժամանակի մեր ազգային եւ եկեղեցական պատմութեան վրայ:

Հայ Գրականութեան Պատմութեան մեջ ժէ. դարը ուշագրաւ է՝ զանազան ուղղութիւններու վրայ իր յառաջ բերած շարժումներու կարգին՝ ժամանակակից անցները սարեգրելու նիգով մը մասնաւորապէս:

Այս շրջանին կը պատկանին Գրիգոր Գարանապետի *Ժառանգագրութիւնը*, որ Չեր աշխատասիրութեամբ քննելու համար սարիներ առաջ հրատարակուեցաւ Ս. Արոռոյս սպարանէն, Ջափարիա Վաղարշապատեցիի պատմական *Յիշատակարանը*՝ Մովսէս, Փիլիպպոս եւ Յակոբ կարողիկոսներու ժամանակին վրայ, Առաքել Դաւրիժեցիի *Պատմագրութիւնը*, Ջափարիա սարկաւազի երկմասնեայ *Պատմութիւնը*՝ այլեւայլ օտար իշխանութեանց եւ իր ժամանակի ազգային դիպուածներու մասին, Ջափարիա երեցի մը գործը, որ, ըս Հ. Ալիբեանի, ժամանակագրական *Գաւազանագիրք* մը պիտի եղած ըլլայ՝